ԳՐԱԲԱՐԻ ԶՈՒԳԱԲԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Գրաբարի բառապաշարի վերաբերյալ կատարվել են մի շարք ուսումնասիրություններ[1], որոնցից առանձնանում է հատկապես գրաբարի բառակազմությանը վերաբերող վերջին աշխատությունը՝ Լ. Ս. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը»։ Արժեքավոր այս մենագրության մեջ հեղինակը հանգամանորեն ընդունության է առնում բացառապես համադրական (ընդ որում՝ և՛ բարդ, և՛ ածանցավոր) բաղադրությունների արտահայտության կաղապարները՝ սպառիչ պատասխան տալով աշխատության մեջ առաջադրված հարցերին[2]։

Ինչ վերաբերում է գրաբարի հարադրական բարդություններին, մասնավորապես՝ զուգաբայական հարադրություններին, ապա դրանք առ այսօր ա բողջական ուսումնասիրության չեն ենթարկվել[3]։

Ակադ. Գ. Բ. Ջահուկյանն իրավացիորեն նկատել է[4], որ, եթե հարադրական բարդության առանձին տեսակ՝ հարադիր բայերը հայերենի բառապաշարին հատուկ են նրա պատմության դեռևս վաղ շրջաններից[5]։ Դրանք երկու կամ ավելի բաղադրիչների հարադրումով կազմված և մեկ բառային իմաստ արտահայտող այն բարդություններն են, որոնք բաղադրիչներից կա՛մ մեկն է արտահայտված բայով (ալգոլիսեք ընդունված է անվանել հարադրավոր բայեր), կա՛մ բոլորը (վերջիններս կոչվում են զուգաբաղադրական բայեր)[6]։ Հմմտ. մի կողմից՝ այգ առնել, յաթոռու անկանիմ, իւրախոյս բառնալ, խոնարհ լինիմ, թեկուսն դարձուցանել, անհոգ առնել, մյուս կողմից՝ բառնալ բերել, զայ մտանել, զայ հասանել, անկեալ կործանեալ, խաղալ գնալ և այլն։

Զուգաբարդական բայերի կազմակերպության մեծանուն Մ. Աբեղյանը նշում է. «Միացած մի ընդհանուր նշանակություն են ստանում հաճախ երկու բայի հարաբերությունները։ Այս ասելիքում էլ երկու կամ բայերն առնվում են իբրև մեկ բայ, և առանձին ժամանակ երևույթի մեջ ստորակետ չունեն ամենորդ է. օրինակ՝ ասելիս գնեցին, մեռնեն սրածնեն, ... թոչեն գան, թոչեն գնան, ...(թոռամ եկամ թոռն գնացին), զայ հասանեն, գնայ հասանեն»[7]։ Որպես բաղադրիչներ առանձին՝ զուգաբարդական բայերն առանձնանում է նաև ահանավոր հատ-

---

1 Այս մասին տե՛ս Լ. Ս. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը» (Երևան, 1987 թ.) աշխատության ներածական գլխում։

2 Նույն տեղում։

3 Գրաբարի զուգաբարդական հարաբերությունների մասին արժեքավոր դիտարկումներ ունի պրոֆ. Ա. Մարգարյանը (տե՛ս Ա. Ս. Մ ա ր գ ա ր յ ա ն. Հայերենի հարադիր բայերը. Երևան, 1966 թ.)։

4 Գ. Բ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան 1987, էջ 362։

5 Ըստ մեր հաշվարկների՝ միայն Վ դասի լեզվական աղբյուրներում հանդիպում են տար. 2000 հարադրավոր բարդություններ (չհաշված զուգաբայերն ու տալ բայի դիմավոր ձևերով հարադրված պատճառականները)։

6 Թեև պատճառական ոճաբանության ասպարեզում գործածվող զարգացական բայերի բաղադրիչները նույնպես միայն բայեր են՝ արտահայտված «անորոշ դերբայ (+տալ բայ) տալ բայի դիմավոր (կամ անցեալ) ձև» կառույցով, այնուամենայնիվ սովորաբար դրանք բայական հարաբերական բաղադրության առանձին տեսակ։

7 Մ. Ա բ ե ղ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. Երևան, 1965, էջ 174—175։

գետներից մեկը՝ Անտուան Մեյեն՝ նկատելով. «Հայերենի (գիտնականը նկատի ունի գրաբար գրական լեզուն — Գ. Խ.) բայերի ամենաբնորոշ կիրառությունը բայական երկու դիմավոր ձևերի խմբավորումն է, որոնք արտասանվում են ընդհանուր ձևով ու գրեթե որպես մեկ բայ և որոնք կազմում են մի տեսակ փոքրիկ միասնություն»[8]։

Բայական հարադրություններից զուգադրական բայերի հիմնական տարբերությունն այն է, որ վերջիններիս բաղադրիչ բոլոր (թվով երկու, հազվադեպ՝ երեք) տարրերն էլ բայով են արտահայտված։

Գրաբարի լեզվական նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ բոլոր բայերի հարադրումով կարելի է կազմել զուգադրական բայեր։ Այդ կապակցությամբ պրոֆ. Ալ. Մարգարյանը տեղին է նկատել, թե զուգադրական բարդություններ են կազմվում «...այնպիսի բայերի հարադրությամբ, որոնց ցույց տված գործողությունները իրապես կապված են կամ կարող են կապվել իրար հետ՝ առնվելով իբրև մի ամբողջություն»[9]։ Այլ կերպ ասած (ինչպես նշում է պրոֆ. Հ. Զ. Պետրոսյանը)՝ զուգադրական բարդության անդամները «...պետք է իմաստային (մերձավոր՝ հոմանիշային, պատճառական, տևանքային, հաջորդականության, հետևողության, մասնավորման, կոնկրետացման, գործողությամբ հարաբերակցվող են) առնչության մեջ լինեն»[10]։

Ուսումնասիրությունից պարզվում է նաև, որ զուգաբայ կազմող բայական բաղադրիչները կամ այդ բաղադրիչներից մեկը լեզվի՝ տվյալ շրջանի բառապաշարի գործուն շերտի բայերիդ են. մի հանգամանք, որ գալիս է ապացուցելու, թե զուգադրական բայերը գրաբարյան աղբյուրներին են անցել հայոց լեզվի ժողովրդախոսակցական ոլորտից (ի դեպ, այս կապն առկա է նաև ժամանակակից հայերենի գրական և ժողովրդախոսակցական ոլորտների զուգաբայերի միջև)։

Հարադրավոր բայերի հետ համեմատած՝ գրաբարյան լեզվական աղբյուրների մեջ զուգաբայություններն ու վերջիններիս կիրառությունը բավականին փոքր թիվ են կազմում։ Ասվածի պատճառը միայն այն չէ, որ զուգաբայերը հատկապես բանավոր խոսքի բառագանձին հատուկ միավորներ են, ուստի և չէին կարող լայն կիրառություն գտնել գրավոր աղբյուրներում։ Զուգադրական բարդությունների գործառական և թվային սահմանափակությունը պայմանավորված է նաև այն բանով, որ դրանք առավելապես ձևավորվում են ոճական նկատառումով, որը նշանակում է, թե երբեմն պարտադիր ու կայուն չէ բայական բաղադրիչների զուգադրումն իբրև մեկ բառային միավոր։ Այս տեսանկյունից զուգաբայերը ներկայացնում են մի տեսակ ազատ հարակցություն ձև, որտեղ, սակայն, իրար հետ կարող են զուգադրվել ոչ թե սահմանական, այլ իմաստային որևէ դաշտով առնչվող միավորներ՝ պայմանավորված տվյալ խոսքային իրադրությամբ։ Զուգադրական բայերին հակառակ՝ հարադրավոր բայերը կուն կառույցներ են. վերջիններիս բաղադրիչների կիրառությունը պարտադիր է բոլոր դեպքերում՝ անկախ տվյալ խոսքային իրադրությունից։

Թեև զուգաբայությունները համարվում են մեկ բառային միավոր, այնուամենայնիվ դասական փաստագիրերն անվանվում են մեկից ավելի բաղադրություններ, որոնցից, անշուշտ, մեկը՝ դարաբարությամբ վերջինը, կարևորը. հիմնականը տվյալ խոսքային իրադրության համար. մինչև նախատես մեն կամ երկու բաղադրիչներ պարզապես սահմանվում են խոսքի՝ մանրամասնելով այն։ Օրինակ՝ Ապա ասին .... Եբրեայ մոտանէ՝ ի մէջ ոնոտանեաց Էլոռոն (Բուն., 180) նախադասությունն Եբրեայ մոտանէ բառաշարի հիմնական իմաստակիր միավոր մոտանէ-ն է. որ ի մէջ ոնոտա-

---

8 Ա. Մեյե. Հայագիտական ուսումնասիրություններ. Երևան. 1978, էջ 383։ Հմմտ. նաև Ալ. Մարգարյան. Հայերենի հարադիր բայերը. Երևան, 1966, էջ 325։

9 Ալ. Մարգարյան. նշվ. աշխ., էջ 325։

10 Հ. Պետրոսյան. Հայերենագիտական բառարան. Երևան, 1987, էջ 369։

ձեւով բայական անդամի լրացումը կառավարվել է ոչ թե երթեալ, այլ մտանէր բաղադրիչի պահանջով։ Այնինչ երթեալ բաղադրիչի միջոցով արտահայտված գործողությունը սոսկ ոճավորման նպատակ է հետապնդում և տրամաբանորեն կարող էր ենթադրվել նաև չկիրառվելու դեպքում։

Խոսքից դուրս զուգադրական բայերի բաղադրիչները սովորաբար մտածվում և արտաբերվում են մեկը մյուսից անբաժան (երթեալ մտանել, գալ անցանել, մոռանալով մոռանալ, թող առնել են), մինչդեռ խոսքի մեջ զուգաբար կազմող բաղադրիչները կարող են ընդմիջվել տվյալ խոսքի համար անհրաժեշտ այլ բառով կամ բառերով։ Օրինակ՝ Երթեալք երկոքին եղբարքն մտանէին յեպիսկոպոսանոցն (Բուզ., 41)։ Թող ես այդր բազմեցայց (Բուզ., 143)։ Արդ, եկ դու հասարակ այսմ նշանի ու դիցուք (Բուզ., 214)։ Արիք ի Դուռն եկայք (Եղիշէ, 27)։

Գրաբարում զուգադրական բայերն ունեն արտահայտության տարբեր ձևեր, որոնց համընդհանուր կաղապարն է $S^{(f)}+S^{(f)}-S^{(f)}+S^{(f)}$[11], վերջիններս մասնակաղապարներից են՝

Ա. $S^{(f)}-S^{(f)}$. որտեղ բաղադրիչներն արտահայտված են տարբեր բայերի միևնույն անդեմ կամ դիմավոր բայաձևերով, այդ թվում՝

1. անորոշ դերբայներով, ինչպես՝ գալ օգնել (Ղուկ., Ե, 7), անկանել առնել (Եղ., ԼԵ, 33), երթալ կալ (Թիւ., ԻԲ, 26), բառնալ բերել (Գործ., ԻԱ, 35), տանել ընկենուլ (Բուզ., 75), անկանել հասանել (Բուզ., 48), կալ մնալ (Եղիշէ, 39), փութալ հասանել (Ագաթ., 413) և այլն։

2. Անցյալ դերբայներով, ինչպես՝ մնացեալ յուսացեալ (Ա Տիմ., Ե, 5), անկեալ տարածեալ (Բ Մակ., Ժ, 4), կայեալ կացեալ (Բուզ., 45), առեալ բերեալ (Ագաթ., 251), կազմեալ պատրաստեալ (Բուզ. 203), կալեալ դիզեալ (Բուզ., 32) և այլն։

Հարկ է նշել, որ զուգաբայեր են կազմում նաև անցյալ դերբայների հոլովված ձևերը, ինչպես՝ Այսպէս ժողով լինէր նախարարացն և իշխանացն, ... ամենայն աշխարհաժողով բազմութեանն եկելոց կուտելոցն:

3. Դիմավոր (թե՛ սահմանական և թե՛ ստորադասական) բայաձևերով, որոնցից վերջիններս այստեղ են ընկնում գործառական ցածր հաճախականությամբ։ Օրինակ՝ դարձաւ գնաց (Թւ., ԻԴ, 25), երթ ա՛ծ (Ծննդ., ԻԷ, 13), առէք ընկեցէ՛ք (Յովն., Ա, 12), հասին կալան (Յուդ., Դ, 4), եկն տարածեաւ (Բուզ., 14), գային ժողովէին (Եղիշէ, 78), երթայր հասանէր (Ագաթ., 408), տանի տայ (Ղուկ., ԺԴ, 15), գայ ունի (Խոր., 103), առնոյր տանէր (Յուդ., ԺԲ, 9), հասանէին առանէին (Բուզ., 48), յարեաւ եկն (Մարկ., Ժ, 50), եկին բերին (Ագաթ., 115), երթիցէ հանիցէ (Բուզ., 108), երթիցեն վճարիցեն (Բուզ., 86), եկաց անկաւ (Բ Թագ., ԻԲ, 20), ածցեն կացուսցեն (Բուզ., 33), բեր մատո՛ (Ծննդ., ԻԷ, 4), եկ կա՛ց (Բուզ., 36), հասեալ մածեալ էին (Բուզ., 121), կազմեալ պատրաստեալ էին (Բուզ., 168), թմբրեալ ծանրացեալ իցէ (Ագաթ., 221), եկեալ հասեալ է (Ագաթ., 18), եկեալ դողեալ էին (Ագաթ., 88), փարեալ պատածացեալ էր (Ագաթ., 391), երթեալ հասեալ էին (Բուզ., 47) և այլն։

Հարկ է նշել, որ և տարբերության անդեմ բայաձևերով արտահայտված զուգադրական բայերի, դիմավոր բայաձևերով արտահայտված զուգաբայությունները ևս են ընկնում գործառական հաճախականությամբ։

Նկատելի է, որ ժամանակաձևերով կազմված զուգաբայերի առաջին բաղադրիչը ... բայը, երկու կողմն, ... է։

Աճական նկատառումով ... բայը ... է հանդես գալ նաև նախադաս կիրառությամբ։ Այս դեպքում էլ դիտվում է երկրորդ բաղադրիչի

11 $S^{(f)}$ բաղադրիչով նկատի ունենք դիմավոր, իսկ S բաղադրիչով՝ անդեմ բայաձևեր։ Հարադիր բառերի բաղադրիչ միավորների միջև դրվում է — նշան։ Եթե բաղադրիչ միավորն իրեն է մի հարադրական բարդություն է, ապա վերջինիս բաղադրիչներն իրար են կապվում + նշանով։

օժանդակ բայը, ինչպես՝ .... զոր մեղացն էր մաշեալ ճնացուցեալ (Ագաթ., 206)։

Անշուշտ, ոճական հնարանք է նաև միևնույն բայի կրկնությամբ կազմված զուգադրական բայերի կիրառությունը, ինչպես՝ զարմացեալ զարմացեալ եմ (Ագաթ., 66)։ Հարկ է նշել, որ այս տեսակ բաղադրությունները գրաբարյան աղբյուրներում չափազանց հազվադեպ են։

Ավելի հաճախ $S_v^{(f)} — S_v^{(f)}$ մասնակաղապարն արտահայտվում է կամ երկու ներգործական կամ էլ երկու չեզոք բայերի զուգադրումով։ Ինչ վերաբերում է կրավորական սեռի բայաձևերին, ապա վերջիններս հազվադեպ են կիրառվում որպես զուգադրական բայերի բաղադրիչներ։ Օրինակ՝ լուծաւ լճաւ (Ա Մակ., Թ, 8), ճակեցան լուծան (Բուզ., 42), կամեցան պատրաստեցան (Բուզ., 48), կազմեցան յօրինեցան (Բուզ., 56), ժողովեցան կազմեցան (Բուզ., 46) և այլն։

Դիտարկումները ցույց են տալիս, որ թե՛ $S_v—S_v$, թե՛ $S_v^{(f)}—S_v^{(f)}$ մասնակաղապարներով արտահայտված զուգադրական բայերի բաղադրիչներից գոնե մեկը (կամ բոլորը) սովորաբար գրաբարյան բառագանձի գործուն շերտի բայերից է, որը անվանում է ընթացք, որևէ ուղղությամբ գնացք, շարժում և այլն։ Այդ բայերն են՝ գալ, գնալ, դառնալ, դիմել, ելանել, երթալ, ընթանալ և այլն։ Օրինակ՝ դառնալ առնուլ (Բ Օրէն., ԻԴ, 4), գալ հասանել (Ծննդ., ԻԱ, 13), երթալ կռուել (Ա Թագ., ԺԷ, 33), դարձիր ե՛կ (Փարպ., 134), եկն թափեցաւ (Բուզ., 21), եկն էանց (Բուզ., 14), չոգաւ յաղթեաց (Բուզ., 19), գնացին տարան (Բուզ., 51), երթայց դարձայց (Ագաթ., 217), ելանէր նստէր (Բուզ., 162), դարձաւ կայաւ (Բուզ. 19), խաղայր գնայր (Եղիշէ, 141), գայր մտանէր (Փարպ., 176), գային անկանէին (Փարպ., 167), արշաւել աւերել (Բուզ. 18), փախեաւ անկաւ (Բուզ., 18), գնային շրջէին (Ագաթ., 426) և այլն։

$S_v^{(f)}—S_v^{(f)}$ մասնակաղապարով արտահայտված զուգադրական բայերի բաղադրիչների շարադասությունը կախված է այն հանգամանքից, թե այդ բաղադրիչներով արտահայտված գործողություններից ո՛ր մեկն է տրամաբանորեն հաջորդելու մյուսին, ո՛ր մեկն է կարևոր տվյալ խոսքային իրադրության համար։ Այս տեսանկյունից պատահական չէ, որ հաճախ միևնույն բայով արտահայտված բաղադրիչը մի դեպքում կիրառվում է նախադաս, մեկ այլ դեպքում՝ վերջադաս։ Համեմատ. առին գնացին (Բուզ., 38) և՝ հասին առին (Ա Մակ., ԺՁ, 30), հասին կոտորեցան (Բուզ., 23) և՝ եկին հասին (Բուզ., 86), ել գնաց (Եղիշէ, 123) և՝ եկն ել (Եղիշէ, 137), կացոյց կանգնեաց (Ա Մակ., ԺԱ 27) և՝ կանգնեաց կացոյց (Եզեկ., Բ, 2), բերէին տային (Բուզ., 51) և՝ եկին բերին (Բուզ., 207) և այլն։

Նշեցինք, որ գրաբարում զուգադրական բայեր հազվադեպ կարող են կազմվել նաև երեք բայերի հարադրումով։ Օրինակ՝ եկին հասին պատեցին (Ա Մակ., Ե, 44), դիմեաց խաղաց գնաց (Ա Մակ., Ա, 18), լուծաւ յճաւ անկաւ (Ա Մակ., Թ, 6), խաղայր գնայր երթայր իջանէր (Բուզ., 15), նիւն լցին ծածկեցին (Բուզ., 14), հասանէին հարկանէին սատակէին (Բուզ., 15), յարիցէ գնասցէ երթիցէ յանդիման լիցի (Բուզ., 139) և այլն։ Բիրված և նմանատիպ զուգաբայերի բովանդակության պլանում գործողությունների հերթագայության աշխուժությունն ավելի քան ակնհայտ է։ Նշենք, սակայն, որ այդպիսիք մեր կողմից զուգաբայեր են դիտվում պայմանականորեն, մանավանդ որ լեզվական աղբյուրների մեջ դրանց բաղադրիչները հաճախ վկայված են նաև տրոհված տարբերակով։ Օրինակ՝ լուծան, լճան, ընդարմացան (Բ Մակ., Գ 24) և այլն։

Ի դեպ, զուգադրական բայերով արտահայտված գործողությունների դինամիզմն առավել ցայտուն է դրսևորվում հատկապես այն դեպքում, երբ բարդության բաղադրիչներից մեկն արտահայտված է հարադրավոր բայով, ինչպես՝ Երբ խաղ յառ առ (Ա Թագ., ԺԵ, 6), խրեաց ազդ արար (Գ Մակ., Ե. 8), ելանէր տայր պատերազմ (Բուզ., 23) և այլն։

Բ. $S^1 - S^1$, որտեղ առաջին բաղադրիչը պարտադիր կերպով արտահայտված է հրամայական եղանակի բայաձևով, իսկ երկրորդը՝ մի դիմավոր բայով, որի հրամայական եղանակի բայաձև լինելը պարտադիր չէ։ Օրինակ՝ Արի է՛ց ի Կելիա (Ա. Թագ., ԻԴ, 4)։ Թող հանից ղշիւղդ յականէ (Դաւ., Ջ, 42)։ Եկ հատանեա՛գ բանից աչագեղոյ դստերս Ականաց (Խոր., 178)։ Եկայր արասցուք մարդ (Ագաթ., 144) և այլն։

Ինչպես զուգադրական բայերի բոլոր տեսակները, այս խմբի զուգաբայերը նույնպես գրական լեզվին էն անցել ժողովրդախոսակցական շերտից[12] և պատումին հաղորդում են կենդանի խոսքին հատուկ երանգ։ Ասվածն ակնառու է հատկապես այն դեպքում, երբ հրամայական եղանակի բայաձևի հետ կիրառվողն ինքն էլ մի զուգադրական կամ հարադրավոր բայ է, ինչպես՝ Եկ տաց խրատ (Գ Թագ., Ա, 12)։ Արիք կամք յաղօթս (Բուզ., 226)։ Արդ եկ զոյգ հասարակ այսմ նշանի ուշ դիցուք (Բուզ., 214)։ Եկայք ձայն բարձցուք (Ա Մակ., Թ 46) և այլն։

$S^1_v - S^1_v$ մասնակաղապարով զուգադրական բայերի արտահայտության պլանում հրամայական եղանակի բայաձևը պարտադիր գրավում է նախադաս դիրք և հանդես է գալիս ոչ թե իր բուն բառային ու քերականական իմաստներով, այլ կատարում է եղանակավորիչ բայի գործառույթ՝ եղանակավորելով իրեն հաջորդող բաղադրիչով արտահայտված գործողությունը։ Հմմտ. մի կողմից՝ Թո՛ղ մեզ այսօր եւ վաղիւն պատասխանի արասցուք քեզ (Բուզ., 141), որտեղ թո՛ղ բայաձևն արտահայտվել է իր բառային և քերականական բուն իմաստներով[13], մյուս կողմից՝ Զփառանձեմ՝ կին Գնելոյ թող առից ինձ կնութեան (Բուզ., 103), որտեղ միևնույն թող հրամայական եղանակի բայաձևն ընդամենը եղանակավորում է բուն գործողության կատարումը։

Նշված մասնակաղապարով արտահայտվող որոշ զուգադրական բայեր խոսքի մեջ կարող են ընդմիջվել տվյալ խոսքի բաղադրիչ այլ անդամներով։ Օրինակ՝ Արիք ի Դուռն եկայք (Եղիշէ, 27)։ Թող ես այդր բազմեցայց (Բուզ., 143) և այլն։

$S^1_v - S^1_v$ մասնակաղապարի առաջին բաղադրիչի գործառույթով սովորաբար հանդես են գալիս գրաբարյան ակտիվ բառապաշարի մի քանի բայերի եզակի և հոգնակի թվերի բուն կամ հորդորական հրամայական ժամանակաձևերը։ Այդ բայերից են՝ ածել, առնուլ, բերել, գալ, երթալ, թողուլ, յառնել և այլն։ Ընդ որում, նշված բայերի հրամայականների և դրանց հաջորդող բայական բաղադրիչների դիմային և թվային համաձայնությունը պատահական է և ոչ թե պարտադիր։ Այնպես որ, այսպիսի զուգադրական բայեր կարող են կազմվել ոչ միայն միևնույն դիմաթվային արտահայտության պլաններն ունեցող բայաձևերի հարադրումով, ինչպես՝ արիք գնասցուք (Մարկ., ԺԴ, 42), եկայք ծածկեսցուք (Դատ., Թ, 15), երթայք դարձարուք (Դ Թագ., Ա, 6), առ արա՛ (Բուզ., 141), եկ թագաւորեա՝ (Դատ., Թ, 10), արի ե՛կ (Փարպ., 163), արի ե՛րթ (Դ Թագ., Ա, 3), առ գնեա՛ (Յայտ., Գ, 18) և այլն, այլ նաև միևնույն կամ տարբեր թվային և տարբեր դիմային արտահայտության պլաններ ունեցող բայաձևերի հարադրումով, ինչպես՝ թող գրեմ (Եղիշէ, 59),

---

12 Ա. Մեյին հնարավոր է համարում, որ զուգաբայեր կազմելու «սովորությունը մասամբ բարբառային լինի» (տե՛ս Ա. Մ ե յ ի. նշվ. աշխ., էջ 385)։

13 Ի դեպ $S^{(1)}_v - S^{(1)}_v$ մասնակաղապարը նույնպես որոշ դեպքերում կարող է բաղադրվել հրամայական եղանակի բայաձևերի զուգադրումով, որտեղ, սակայն, առաջին բաղադրիչը պարտադիր կիրառվում է իր բուն նշանակությամբ։ Օրինակ՝ արի՛, կե՛ր (Գ Թագ, ԺԹ, 7) զուգաբայության մեջ արի՛ բայաձևով կե՛ր հրամայականը չի եղանակավորվում։ Այդ է վկայում նաև հաջորդ նախադասությունը, որտեղ նույնպես նշված բայը (յառնել) գործածվել է իր բուն նշանակությամբ՝ ու յարեաւ, եկեր և արբ (Գ Թագ., ԺԹ, 8)։

թող անցցուք *(Դան., ԺԲ, 5)*, թող անիծանէ *(Բ Թագ., ԺՉ, 10)*, արիք կամք *(Բուզ. 226)*, արի գնասցուք *(Բուզ., 87)*, եկ տեսցուք *(Բուզ., 139)*, եկայք ամփոփեսցուք *(Ագաթ., 373)*, եկ երթիցուք *(Ա Թագ., Թ, 10)*, եկայք փութասցուք *(Փարպ., 154)*, եկ տարայց *(Թիւ., ԻԳ, 27)*, արիք երթիցուք *(Մատթ., ԻՁ, 46)*, եկայք դիտեսցուք *(Դ Թագ., Է, 4) և այլն։*

Գ. $Տ_v - Տ_v^{(l)}$ *որտեղ* $Տ_v$ *բաղադրիչն արտահայտվում է անցյալ դերբայով, իսկ* $Տ_v^{(l)}$*-ը՝ վերջինիս հետ իմաստային պլանով առնչվող անդեմ կամ դիմավոր բայաձևով։ Օրինակ՝* սկսեալ խօսել *(Բուզ., 33)*, դիմեալ երթայր *(Բ Օրէն., Բ, 3)*, առեալ ածէ *(Մատթ., Դ, 5)*, անկեալ թաւալէին *(Ա Մակ., Թ, 17)*, բարձեալ տանէին *(Սաղմ., ՃԻԵ, 6)*[14], յարուցեալ գան *(Եղիշէ, 110)*, խաղացեալ գայ *(Փարպ., 128)*, ընդգրկեալ բերէին *(Ագաթ., 317)*, պնդեալ յամառէին *(Բուզ., 74)*, յաղթեալ վանէր *(Փարպ., 153) և այլն։*

$Տ_v - Տ_v^{(l)}$ *մասնակաղապարի* $Տ_v^{(l)}$ *բաղադրիչը չի կարող արտահայտվել անցյալ դերբայով բաղադրված վերլուծական ժամանակաձևով, քանի որ այդ դեպքում արդյունքում կստանանք ոչ թե* $Տ_v - Տ_v^{(l)}$, *այլ* $Տ_v^{(l)} - Տ_v^{(l)}$ *մասնակաղապարը, որտեղ առաջին բաղադրիչի օժանդակ բայը հասկանալի լինելու պատճառով զեղչված է։ Այսպես՝* դարձեալ եկեալ եմ *(Բուզ., 87)*, եկեալ հասեալ են *(Ա Մակ., Գ, 4)*, անկեալ կործանեալ էր *(Ա Մակ., Թ, 1) զուգադրական բայերի առաջին բաղադրիչներն արտահայտված են ոչ թե սոսկ անցյալ դերբայներով, այլ մաղակատար-հարակատար ներկա և անցյալ ժամանակաձևերով, որոնց օժանդակ բայերը զեղչված են։*

Զուգաբայեր են նաև անցյալ դերբայի և էական բայերի (եմ, լինիմ, գոմ) *ու դրանց փոփոխակների* (գտանիմ, դնիմ, կամ *և այլն) հարադրումով ձևավորված կապակցությունները, որոնք, բացառությամբ* եմ *բայի օժանդակությամբ ձևավորվածներից, շարահյուսական մակարդակում դիտվում են բաղադրյալ ստորոգյալներ, ինչպես՝* յուսացեալ են *(Ագաթ., 310)*, անկեալ կայ *(Դան., Գ, 25)*, յեցեալ լիցի *(Սիր., ԺԵ, 4)*, Լուեալ լինիմ *(Յեսու, Բ 17)*, մոռացեալ լինիմ *(Սաղմ., ՃԻԵ, 6)*[15], ծանուցեալ լինիմ *(Մատթ., Ժ, 26)* կայ հրաժարեալ *(Ղուկ., ԺԴ, 18)*, կայ անկեալ մեռեալ *(Դան., Գ, 25)*, ծաղկեալ իցէ *(Երգ., Է, 14)*, չեմ լեալ *(Բուզ., 169)*, դարձեալ իցեն *(Բուզ., 93)*, անկեալ դնէր *(Բուզ., 68)*, անկեալ գտանիմ *(Բ Մակ., ԺԵ, 28)*[16] *և այլն։*

Բնականաբար, զուգադրական բայեր չեն նաև անցյալ դերբայի և է *բայի* է, էր, իցէ *միադիմի բայաձևերի կապակցությամբ արտահայտված ստորոգյալները, որոնց հետ սովորաբար հանդես են գալիս սեռական հոլովով արտահայտվող փոխակերպված ենթականեր, ինչպես՝* Զոր հանեալ էր ի Նոդանէ Տիգրանայ *(Խոր., 169)*, Զոր ինչ գտեալ էր Երուանդայ *(Խոր., 171)*։ Քո իսկ է ծնեալ բմեղ *(Ագաթ., 172)*։ Համակ զերկիրս Հայոց դոցա է կերեալ *(Բուզ., 199)*։ Իբրև թէ իւր իցէ գործեալ *(Բուզ., 184) և այլն։*

$Տ_v - Տ_v^{(l)}$ *մասնակաղապարը գրաբարում գործածվում է ոչ միայն չեզոք և ներգործական, այլ նաև կրավորական կառույցներ ձևավորելիս։ Առաջին երկուսի մեջ անցյալ դերբայի հետ զուգադրվում են մի դեպքում չեզոք սեռի բայերի դիմավոր ձևեր, մյուս դեպքում՝ ներգործական սեռի բայերի, ինչպես՝* Սակայն ևս առաւել ստիպով եկեալ հասանէին զունդն Պարսից ի գաւառն Արտազ *(Փարպ., 69)*։ Իսկ սոցա դիտացեալ՝ ձգեալ հանին զնա ի մեր *(Ագաթ. 116) և այլն։ Բերված նախադասությունների մեջ անցյալ դերբայը և դիմավոր բայաձևեր ներկայացնում են միևնույն սեռի քերականական կարգը, որը, սակայն, պարտադիր պայման չէ։ Բազմաթիվ դեպքերում չեզոք սեռի*

---

[14] *Հմմտ.* ...որ բարձեալն տանէին *(Ղուկ., Է, 14), որտեղ* Ն *հոդի առկայությունը պայմանավորված է* որ *հարաբերական դերանվան նախադաս կիրառությամբ։*

[15] *Հմմտ.* մոռացօնք լինիմ *համանիշը։*

[16] *Վերջին երկուսը* անկեալ կամ *ի համանիշներն են։*

անցյալ դերբայների հետ զուգադրվում են ներգործական սեռի դիմավոր բայաձևեր (ինչպես՝ Որսեալ ածին զչուրն (Ագաթ., 273) և ընդհակառակը (ինչպես՝ .... զմին ի կողմանս Յունաց առեալ փախչէին (Ագաթ., 24)՝ այսպիսով ստեղծելով ոչ մաքուր՝ խառը տիպի կառույցներ։

Ինչ վերաբերում է կրավորական կառույցներին, ապա դրանցում անցյալ դերբայի հետ զուգադրվում են ներգործական սեռի՝ կրավորաձև խոնարհվող ներարկված բայաձևեր։ Օրինակ՝ Եւ արքայն Արշակ ընդ առաջ երթայր նոցա մինչև ի լեառն, որ անուանեալ կոչի Առեւծ (Բուզ., 62)։ ....զի սի գերեալ յանդեսցի աշխարհս (Բուզ., 23)։ Զի այսպէս յայտնեալ բարբառեցաւ (Բուզ., 37) և այլն։ Կրավորական կառույցների մեջ կրավորական սեռի քերականական իմաստ է արտահայտում ոչ միայն դիմավոր բայաձևը, այլ նաև անցյալ դերբայը՝ այս դեպքում հանդես բերելով իր՝ հասարակ բայաձև լինելու առանձնահատկությունը։

$S - S^{(\,)}$ մասնակաղապարի մեջ անցյալ դերբայը մշտապես նախորդում է դիմավոր բայաձևով արտահայտված բաղադրիչին վերջինիս հետ կազմելով կամ համանշային (համզվադեպ՝ համանշային) դաշտ, կամ մեկը մյուսին հաջորդող գործողությունների կից շղթա, ինչպես՝ յարուցեալ վասէր (Փարպ., 153), պնդեալ յամառէին (Բուզ., 74), բաժանեալ պատառեցաւ (Փարպ., 1) և այլն։ Ասվածս ինքնին նշանակում է, որ դիմավոր բայաձևերին նախորդող ոչ բոլոր անցյալ դերբայներն են տվյալ դիմավոր բայաձևերի հետ զուգադրական կազմում։ Այսպես՝ Եւ ի մեռանելն Մանատրկոյ՝ միաբանեալ թագաւորազանցն զնա՝ առանց տրանց յազգէն Բագրատունեաց լինել թագադիր (Խոր., 162) նախադասության ընդգծված բայաձևերը զուգադրական բայ չեն կազմել, քանի որ դրանցից ամեն մեկը արտասանական շղթայի մեջ հանդես են գալիս որպես տարբեր շարույթների բաղադրիչներ՝ պահպանելով իրենց յուրային շեշտը։

$S_v - S^{v}$ մասնակաղապարով արտահայտված զուգադրական բայերի առաջին բաղադրիչը սովորաբար ընթացք անվանող բայերից (անցանել, գալ, գնալ, դառնալ, դիմել, Նրթալ և այլն) մեկի անցյալ դերբայական ձևն է։ Այս շարքը լրացնում են նաև գրաբարի բառապաշարի գործուն շերտի որոշ բայեր (առնուլ, բառնալ, բերել, տանել և այլն) անցյալ դերբայները։ Օրինակ՝ եկեալ երկիրպագեաց (Մատթ., Բ, 8), անցեալ եկին (Մատթ., ԺԴ, 39), գնացեալ եհաս (Գործ., ԻԸ, 13), պնդեալ գայր (Դատ., Դ, 22), գնացեալ երթաս (Ծննդ., ԼԱ, 30), դիմեալ գայ (Ես., Իէ, 11), բերեալ կարդաց (Բ Եզր., Դ, 23), առեալ ածին (Ա Մակ., Թ, 37), վարեալ բերէր (Բ Մակ., Դ, 25), բարձեալ ունէր (Յեսու, Դ, 18), եկեալ հասանիցէ (Բուզ., 96), առեալ գնացին (Փարպ., 153), բարձեալ բերէր (Ագաթ., 422), առեալ տապալէին (Եղիշէ, 69) և այլն։

Կան մի քանի զուգադրական բայեր, որոնց հոգնակի թվով արտահայտված դիմավոր բաղադրիչների հետ անցյալ դերբայները կապակցվում են համաձայնության եղանակով՝ դրանց հետ համաձայնելով թվի քերականական կարգով։ Օրինակ՝ գնացեալք երթային (Բուզ., 147), երթեալք հասանէին (Բուզ., 41) և այլն։

Անցյալ դերբայի գործառույթով հաճախակի կիրառվող բայերը հարկ եղած դեպքում կիրառվում են նաև դիմավոր բաղադրիչի գործառույթով։ Հմմտ. երթեալ կատարէր (Բուզ., 7) և՝ յուրացեալ երթիցէ (Բուզ., 83), եկեալ հասին (Բ Մակ., Գ, 19) և՝ հասեալ եկին (Թիւ., ԺԳ, 27) և այլն։

Զուգադրական բայերի այս խմբի մեջ կան նաև այնպիսիք, որոնց կամ առաջին բաղադրիչն է մի առանձին բարդություն, կամ երկրորդ բաղադրիչը, կամ էլ երկու բաղադրիչները միաժամանակ։ Օրինակ՝ զհետ մտեալ երթայր (Դատ., Դ, 16), ելեալ տացես պատերազմ (Եզ., ԺԷ, 9), չու արարեալ գնայ (Խոր., 33), երթեալ յանդիման լինէր (Բուզ., 13), թողեալ ի բաց գնացէ (Խոր., 171), զտեղի առեալ կային (Եղիշէ, 118), չու արարեալ գնաց (Բուզ.,

45)․ ա- ընդդէմ մարթացեալ դառնալ (*Ագաթ․, 6*)[17], գերի առեալ տանէին (*Եղիշէ, 125*), սկիզբն արարեալ պատմեաց (*Փարպ․, 1*), յուղի անկեալ երթա- յին (*Բուզ․, 82*) *և այլն։*

$S_v - S_v^{(1)}$ *մասնակազմապարով արտահայտվող զուգադրական բայերի համար տիպական է և այն, որ դրանց բաղադրիչները խոսքի շղթայում սովորաբար չեն ընդմիջվում այլ միավորներով։ Հակառակ դեպքում, չհաշված բացառիկ կիրառությունները, դրանք կարող են դադարել զուգաբայեր լինելուց։*

Դ. $S_v - S_v^{(1)}$. սա նախորդներից տարբերվում է նրանով, որ բաղադրիչներն արտահայտվում են ոչ թե տարբեր, այլ միևնույն բայի թեք և կամ ուղիղ ձևերի զուգադրումով։

Նշված մասնակազմապարով ձևավորվող զուգադրական բայերի բաղադրիչներն արտահայտվում են միևնույն բայի՝

1. «Անորոշ դերբայ-դիմավոր բայաձև» *կապակցությամբ, ինչպես՝* ունել ունի (*Եբր․, Ի, 1*), լինել լինիցին (*ՆՀԲ*) *և այլն, որոնց գրաբարի լեզվական աղբյուրներում հազվադեպ կիրառություն ունեն։*

Հատկանշական է, որ այս ենթախմբի զուգադրական բայերից մեկի երկրորդ բաղադրիչն ինքն է մի հարադրավոր բարդություն՝ ըմպել ըմպէ գաս (*Օղիշէ, 36*)։

Նշված կապակցությամբ բարդությունների մեջ անորոշ դերբայը կիրառվում է նախադաս՝ դիմավոր բաղադրիչով արտահայտված գործողությանը հաղորդելով սաստկական իմաստ[18]։

$S_v - S_v^{(1)}$ *մասնակազմապարով արտահայտված կապակցությունների մեջ* տալ *բայի անդեմ և դիմավոր ձևերը ոչ թե զուգադրական բայ են դառնում, այլ հարադրավոր պատճառական բայ։ Հմմտ. մի կողմից՝* Տալ եսու կնիք տանն Մտափաննաց (*Ա Կոր․, Ա, 16*), *մյուս կողմից՝* Սիմ կճեալ կանգ- տայր յՕդեմիայ ի վերնատունս ապարանից իւրոց (*Խոր․, 159*)։

Բ. «Անորոշ դերբայի գործիական հոլովաձև-դիմավոր (*կամ անդեմ*) բայաձև» *կապակցությամբ, ինչպես՝* դառնալով դառնայցեն (*Յեսու․, ԻԴ, 12*), երթալով երթայր (*Ա Թագ․, Գ, 21*), յուզելով յուզեաց (*Յովել, Ա, 7*), կացուցանելով կացուսցեն (*Բ Օրէն․, ԺԷ, 15*), կելով կեցցես (*Դ Թագ․, Ն, 10*) *և այլն։*

Շարադասությամբ անորոշ դերբայի գործիականով արտահայտված բաղադրիչը սովորաբար գրավում է նախադաս դիրք և միայն բացառիկ դեպքերում է վերջադաս կիրառվում։ Հմմտ. մի կողմից՝ լալով ելաց (*Ես․, Լ, 19*), ելանելով ելցուք (*Թիւ․, ԺԳ, 31*), *մյուս կողմից՝* ելաց լալով (*Ա Թագ․, Ա, 10*), իջցէ իջանելով (*Ա Թագ․, ԻԳ, 20*) *և այլն։*

Ինչ վերաբերում է դիմավոր բաղադրիչին, ապա վերջինս կարող է արտահայտվել բայի թե՛ պարզ, թե՛ բաղադրյալ ժամանակային ձևերով, ինչպես՝ ուտելով կերեալ էր (*Ա Թագ․, ԺԴ, 30*), ծածկելով ծածկեալ իցէ (*ՆՀԲ*), կելով կեցցէ (*ՆՀԲ*), երկնչելով երկեաւ (*Բուզ․,)*, *իսկ հազվադեպ՝ նաև անդեմ բայաձևերով, ինչպես՝* իմանալով իմանեալ (*Առակ․, ԻԳ, 1*) *և այլն։*

$S_v - S_v^{(1)}$ *մասնակազմապարով արտահայտվող զուգադրական բայերի երկրորդ բաղադրիչն ինքը կարող է մի հարադրավոր բայ լինել, ինչպես՝* տալով տացես փոխ (*Բ Օրէն․, ԺԷ, 8*), տալով տայր պարգեւս (*Ծննդ․, ԽԷ, 22*) *և այլն։*

Հատկանշական է, որ անորոշ դերբայի գործիական հոլովաձևով արտահայտված բաղադրիչները նույն գործողությունն անվանող հաջորդ բաղադրիչ

17 *Իմա՛* ոչ մարթացեալ ընդդէմ դառնալ։

18 *Զուգադրական բայերի այս ձևը ցայսօր պահպանվել է արդի հայերենի ժողովրդախոսակցական ոլորտում, ինչպես՝* ուտել են ուտում, մի փախչել փախավ, ծեծել ծեծեցին, տանել տարավ *և այլն։*

ների հետ միասին դառնում են գործողության կատարման շարունակականության, սաստկականության, մի տեսակ, անպայմանության գաղափարի ոճական արտահայտիչներ»[19]։ Այդ բանին, անշուշտ, նպաստում է այն հանգամանքը, որ բարդության երկու բաղադրիչներն էլ միևնույն բայի անդեմ ու դիմավոր ձևերն են։ Օրինակ՝ Նթէ տացէ այր ոամենայն զկեանս իւր ընդ սիրոյ։ անգոսնելով անգոսնեսցեն զնա (Երգ., Ը, 7)։ Երթալով երթային և լային, ոյք բարձեալ տանէին զսերսանիս իւրեանց (Սաղմ, ՃԻԵ, 6)։ Տալով տացէ Տեր ի ձեռս արբայի (Դ Թագ., ԻԲ, 6)։ Եւ մի ոոռասցին զգործս Աստուծոյ, և զպատուիրանս նորա խնդրելով խնդրեսցեն (Ագաթ., 471)։ Երկնչելով երկեաւ թագաւորն Պարսից Շապուհ ի միտս իւր (Բուզ., 106) և այլն։

մասնակաղապարով արտահայտվող զուգադրական բայերը այս ենթախմբի հետ բովանդակության պլանում առնչվում են այն բաական բառակապակցություններին, որոնց ստորադաս անդամն արտահայտված է՝

ա) տվյալ գերադաս անդամ բային համարման գոյականի գործիական հոլովաձևով, ինչպես՝ Եւ տաց հուր յԵգիպտոս, և խռովութեամբ խռովեսցի Սային (Եզեկ., Լ, 16)։

բ) «ի(յ) նախդիր—տվյալ գերադաս անդամ բային համարման գոյականի հայցական հոլովաձև» կապական կապակցությամբ, ինչպես՝ Եւ տապացաւ մարդիկ ի տապ մեծ (Յայտ., ԺԶ, 9)։

գ) «Զ նախդիր—տվյալ գերադաս անդամ բային համարման գոյականի հայցական հոլովաձև» կապական կապակցությամբ, ինչպես՝ Սմաշեցէք զամօք մեծ, ոյք յուսացեալդ էք ի դրօշեալս (Ես., ԽԲ, 17)։

Պետք է նշել, որ նշված տիպի կապակցությունների մեջ Զ նախդիրը առկայացման ցուցիչի դեր չի կատարում. չեզոք սեռի բայերի պահանջով հանդես եկած հայցական հոլովաձևին այն հաղորդում է գործիական հոլովաձևին հատուկ քերականական իմաստ։

դ. «Անցյալ դերբայ-դիմավոր բայաձև» կապակցությամբ, որտեղ անցյալ դերբայը պարտադիր դրվում է նախադաս դիրք՝ կատարելով այն նույն գործառույթը, ինչ գործառույթ որ կատարում է անորոշ դերբայի գործիական հոլովաձևով արտահայտված բաղադրիչը նախորդ ենթախմբի բարդությունների մեջ։ Օրինակ՝ դարձեալ դարձայ (Գաղատ., Ա, 17)[20], երթեալ երթիցէ (Բ Մակ., Դ, 19) և այլն։ Դժվար չէ նկատել, որ միևնույն բայի «անցյալ դերբայ դիմավոր բայաձև» և «անորոշ դերբայի գործիական հոլովաձև դիմավոր բայաձև» մասնակաղապարներով արտահայտվող զուգադրական բայերը բառային համանիշներ են (հմմտ. երթեալ երթիցէ և՝ երթալով երթիցէ), որոնցից գրաբարի լեզվական աղբյուրներում «անցյալ դերբայ-դիմավոր բայաձև» կապակցությամբ արտահայտված բարդությունները չափազանց սակավադեպ են՝ կիրառված միայն թարգմանական գրականության մեջ։

4. «Անդեմ կամ դիմավոր բայաձև-նախդրավոր անդեմ կամ դիմավոր բայաձև» կապակցությամբ, որտեղ երկրորդ՝ նախդրավոր բաղադրիչի միջոցով առաջին բաղադրիչի արտահայտած գործողությանը հաղորդվում է շարունակական, սաստկական երանգ։ Օրինակ՝ անցանել զանցանել (Գ Մակ., Զ. 17), անցուցանել զանցուցանել (Առակ., ԼԱ, 29) և այլն։

Լեզվական աղբյուրներում կիրառվում են նաև այս ենթախմբի զուգադրական բայերի հոաբաղադրիչ տարբերակները, որոնցում առավել քան ակնհայտ է ենթակային վերագրվող հատկանիշի դինամիզմը։ Օրինակ՝ Զոր իբրև լուաւ թագաւորն Արշակ, զարմացեալ լինէր արմանայր ընդարմանայր (Բուզ., 103)։

---

19 Պրոֆ. Վ. Ա. Քոսյանը գործիական հոլովաձևի կիրառության այս դեպքը կոչում է «սաստկացման գործիական» (Վ. Ա. Քոսյան. Գրաբարի բառակապակցությունները. Երևան, 1980, էջ 165)։

20 Այլ կիրառությունների մեջ դարձեալ-ը հանդես է բերում մակրային հատուկ «բնավորություն», ինչպես՝ դարձեալ ի նոյն դարձիւք (Ա Կոր., է, 5)։

Նկատելի է նաև, որ այս ենթախմբի զուգադրական բայերի կիրառությունը ևս կրում է ոճավորված բնույթ՝ հետապնդելով խոսքի ոճավորման նպատակ:

Ինչպես նշել ենք, զուգադրական բայեր կազմող բաղադրիչները ոչ թե պատահական, այլ միմյանց հետ իմաստային որևէ առնչություն ունեցող միավորներ են, և որ այդ միավորների՝ իրար հետ զուգադրումը պայմանավորված է տվյալ խոսքային իրադրությամբ։ Այս տեսանկյունից նկատելի է, որ զուգադրական բայեր կազմող բաղադրիչները՝

1. կա՛մ համանիշ են[21], ինչպես՝ կատարեաց ի գլուխ եհան (Բուզ., 50), աղաղակեալ կոչեն (Փարպ. 1) երթայցեն գնայցեն (Ագաթ., 218) և այլն,

2. կա՛մ հոմանիշ են, ինչպես՝ գումարեաց ժողովեաց (Բուզ. 14), սփռեցան տարածեցան (Բուզ., 14), յորդեալ բղխեն (Փարպ., 4), ճակտեալ ճայթայեսցէ (Բուզ., 24) և այլն,

3. կա՛մ հականիշ են, ինչպես՝ գնացին եկին (Բուզ., 26), բարձի թողի (Սաղմ., Զ, 13) և այլն,

4. կա՛մ էլ անվանում են մեկը մյուսին հաջորդող հարակից գործողություններ, ինչպես՝ հարեալ սատակէր (Բուզ., 41), գայ անցանէ (Խոր., 162), սատուցեալ սպանէր (Բուզ. 23), ահապարէր կոտէր (Բուզ. 117) և այլն։

Առանձնացված ձևաիմաստային խմբերից գրաբարում բաղադրիչների բազմազանությամբ և կիրառության ակտիվ հաճախականությամբ առանձնանում են այն զուգադրական բայերը, որոնց բաղադրիչներն անվանում են հոմանիշ կամ հարակից գործողություններ։

Թեև հարադրավոր բայերի համեմատությամբ զուգադրական բայերն աչքի չեն ընկնում ձևաիմաստային զույգերի առատությամբ, այնուհանդերձ գրաբարի լեզվական աղբյուրներում առանձնանում են՝

1. թե՛ համանիշ զույգեր, ինչպես՝ գայր բերէր (Բուզ., 20) և՝ եկին ածին (Բուզ., 61), արի գնա՛ (Յովն., Գ, 2) և արի ե՛րթ (Դ Թագ., Ա, 3) և այլն, որոնք նկատելիորեն սակավադեպ են,

2. թե՛ հականիշ զույգեր, ինչպես՝ գայր հասանէր (Բուզ., 135) և՝ գնայր հասանէր (Բուզ., 203), երթալ տանել (Բուզ., 147) և՝ գալ բերել (Բուզ., 20), արի ե՛կ (Երգ., Բ, 10) և՝ արի գնա՛ (Յովն., Գ, 2), արիք եկայք (Եղիշէ, 27) և՝ արիք երթիցուք (Մատթ., ԻԶ, 46), խաղայր գնայր (Եղիշէ, 128) և՝ խաղայր երթայր (Ագաթ. 408) և այլն, որտեղ իմաստային հակադիր եզրեր են դառնում մի դեպքում տարբեր զուգաբայերի առաջին բաղադրիչները, մյուս դեպքում՝ երկրորդները, իսկ երրորդ դեպքում՝ և՛ առաջին, և՛ երկրորդ բաղադրիչները,

3. թե՛ հոմանիշ զույգերը, ինչպես՝ ճակեցան լուծան (Բուզ., 42), բաժանեալ պատառեցաւ (Փարպ., 1) և ճակտեալ ճայթայեսցէ (Բուզ., 24), կարգել կազմել (Բուզ., 129) և՝ կազմել պատրաստել (Բուզ., 111), խաղալ հասանել (Բուզ., 17) և՝ գալ հասանել (Բուզ., 134), այպանեալ պարսաւեսցես (Խոր., 237) և՝ արհամարհեալ այպանէին (Բուզ., 41) և այլն, որոնք, անկասկած, զուգադրական բայերի առավել բնորոշ արտահայտչամիջոցներն են։

---

21 Նշելով, որ «համանիշություններ արտահայտվում է բոլոր խոսքի մասերով, ...զուգադրյալ բայերի ու հարադրությունների համանիշ ձևերով», պրոֆ. Վ. Դ. Առաքելյանն իրավացիորեն նկատում է, որ այդ «զարդերը սփռված են թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական գրականության մեջ» (տե՛ս Վ. Դ. Առաքելյան. Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության. Երևան, 1981, էջ 71)։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթ.—Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909։
Բուզ.—Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883։
Եղիշէ.—Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957։
Թուղթ—Ղազարայ Փարպեցւոյ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904։
Խոր.—Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913։
Փարպ.—Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904։

СОСТАВНЫЕ (СОПОСТАВЛЕННЫЕ) ГЛАГОЛЫ В ГРАБАРЕ

ГУРГЕН ХАЧАТРЯН

Резюме

Составные (сопоставленные) глаголы присущи армянскому языку с ранних этапов его развития. Это сложные слова, образованные из двух (реже трёх) компонентов, в которых сопоставляются синонимичные, антонимичные глаголы, а также такие, которые обозначают чередующиеся действия. Древнеармянские литературные источники свидетельствуют о том, что указанные глаголы выражаются с помощью целого ряда моделей. Они чаще всего встречаются в произведениях тех летописцев, язык которых изобилует народно-разговорными элементами (Лазарь Парпеци, Павстос Бузанд). Многие из этих глаголов вступают в формальные и смысловые отношения друг с другом, образуя синонимичные или антонимичные поля. Использование составных глаголов придает живость и динамичность языку повествования.